Դիանա Աբգարի հուշարձանը

Դիանա Աբգարի եզակի հուշարձանի նախագիծը կարևոր է Հայաստանի համար: Սա կլինի պատմական կնոջը նվիրված առաջին ՀՈՒՇԱՐՁԱՆԸ Երևան քաղաքում: Նախագիծը կազմակերպել է «Ազգային Կենտրոն» Զարգացման Հիմնադրամը և նրա թիմը: Հուշարձանի տեղադրումը տեղի կունենա Երևանի կենտրոնում գտնվող Դիանա Աբգարի անվան զբոսայգում:

Դիանա Աբգարի բրոնզե արձանի չափանիշներն ու ակնկալիքները

Հաշվի առնելով Դիանա Աբգարի անձի նշանակությունը և նախագծի կարևորությունը քաղաքի համար՝ կազմակերպիչները սահմանել են որոշակի չափանիշներ և ապագա հուշարձանի տեսլականը:

Ըստ կազմակերպիչների՝

Արձանը պետք է հստակ արտացոլի Դիանայի ԿԵՐՊԱՐԸ

- Դիանայի արտաքինն ու կեցվածքը պետք է լինեն ինքնավստահ և վեհապանծ:
- Նա պետք է ընկալվի որպես ուժեղ կամքի տեր անձնավորություն՝ հզոր, սակայն բարի և ազնիվ բնավորությամբ:
- Դիանայի հայացքը պետք է լինի վեհ և վստահ:
- Նա պետք է անսասան և ուղիղ նստած լինի՝ ցույց տալով իր արժեքները:
- Դիանան բարդ անձնական հատկանիշների տեր էր՝ և՛ ռադիկալ, և՛ ավանդական: Նա պայքարում էր ազատ Հայաստանի համար և քննադատում համաշխարհային տերությունները: Այնուամենայնիվ, նա խորապես նվիրված էր իր քրիստոնեական հավատքին և կարևորում էր պահպանողական բարոյական արժեքները:
- Դիանան անխոնջ աշխատում էր: Արձանը պետք է փոխանցի Դիանայի համոզիչ վճռականությունը և արտահայտի նրա էներգիան: Կարելի է պատկերել նրա մարմինը մի փոքր դեպի կողք շրջված, ինչը կնշանակի գործողություն և ձգտում դեպի ապագա:

ԱՐՁԱՆԸ լինելու է բրոնզից

- Արձանին նայելիս պետք է տեսնես թեթև ծերության նշաններ: Քանդակի գույնը մգացնելու համար կարելի է օգտագործել պատինա:
- Դիանայի հագուստը պիտի լինի ազնվական՝ դասական և պաշտոնական տեսքով: Նա կրում էր Վիկտորիանական դարաշրջանի հագուստ, սակայն դա չի նշանակում, որ նա պետք է պատկերվի հենց այդպիսի հագուստով:
- Դիանայի սանրվածքը պետք է լինի դասական ոճի մեջ: Նկատի ունեցեք, որ նրա մազերը գլխին միշտ բոլորակ (կոս) արված է եղել:
- Ուշադրություն դարձրեք Դիանայի ձեռքերի դիրքին, նրա ուղիղ նստած կեցվածքին և հայացքին:
- Բրոնզե ֆիգուրը պետք է լինի լիաչափ և ծավալային:
- Հուշարձանի մոտավոր չափերը՝ 2,5մ լայնություն × 4,5մ բարձրություն (ներառյալ ճարտարապետական տարրերը և լրացուցիչ դետալները):

Հուշարձանի դիզայնը պետք է փոխանցի պարզ նրբագեղութ նյութերի և համապատասխան ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԻ համակարգված օգտագործման միջոցով

- Դիանան հավատարիմ էր քրիստոնեական հավատքին: Պատկերեք քրիստոնեական խորհրդանիշներ կամ քանդակի, կամ հուշարձանի ճարտարապետական տարրերի վրա:
- Դիանան իր կյանքի մեծ մասն ապրել է Ճապոնիայում: Ցույց տվեք Ճապոնիայի ծագող արևը ետին պլանում՝ Դիանայի գլխի ետևում, գլխից 3 կամ 4 անգամ մեծ: Հաշվի առնելով նրա դիրքը՝ այն կարող ենք նաև դիտել որպես լուսապսակ, որպես նրա քրիստոնեական կյանքի վկայություն, որպես նշանակալի բարեգործական աշխատանքների և առօրյա սրբի հայեցակարգ: (Նյութը կարող է լինել ապակի կամ քար (օրինակ՝պորֆիր):) «Արևը» հնարավոր է լուսավորվի:
- Մի՛ ծանրաբեռնեք քանդակը ավելորդ տարրերով: Տարրերը կարող են պատկերվել հուշարձանի ճարտարապետական հատվածների վրա:
- Դիանայի քանդակի դիրքը բարձրացնելու համար հնարավոր է օգտագործվի պատվանդան:

www.dianaapcar.am

DIANA APCAR MONUMENT